

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՂԳ Ի ԴԻՒԱՆԷ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ

1900 թուի Ապրիլի 25-ին թ. 43 դրութեամբ Ս. Պետերբուրգի և Մոսկուայի Հայոց եկեղեցեաց պատուաւոր Հոգաբարձու պայծառափայլ իշխան Ս. Ս. Աբամելիք Լազարեանց պաշտօնապէս յայտնեց Նորին Ս. Օծութեան աղգիս Վեհափառ Հայրապետին, թէ ի յիշատակ իւր նախահաւ ի Տէր հանգուցեալ Յովհաննէս Ղազարեան Լազարեանցի մահուան հարիւրամեկին (1801 Հոկտ. 24), համաձայնութեամբ Ս. Պետերբուրգի Եկեղեցեաց Խորհրդին, որոշում է մշտական քսան նոր թոշակաւորների ընդունելութիւնը հայ հոգևորականների երեխաներից Մոսկուայի Լազարեան ճեմարանում, թողնելով նոր որդեգիրների ընտրութիւնը Նորին Սրբութեան Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին։ Այդ լուրը հրատարակուելով և Տփխիս հայ լրագրութեանց մէջ, սկսուեցին հետզհետէ հայ քահանաների կողմից խնդիրներ հասնել Վեհ. Հայրապետին իրենց որդւոց ընդունելութեան համար՝ որոշուած քսան որդեգիրների շարքում։ Անցեալ 1901 թուի Մայիս ամսին սկսուելով խնդրատուների որդւոց ընտրութիւնը, հետզհետէ մինչև Նոյեմբեր ամսի 15-ը, ուղարկ-

ուեցան և ընդունուեցան Լազարեան Ճեմարանի վարչութեան կողմից հետևեալ քսան աշակերտները։

	Անուն եւ ազգանուն	Ծննդավայր	Գաւառ	Նահանգ
1.	Օհան Գիւլնազարեան	Աշտարակ	Էջմիածին	Երևան
2.	Հայկակ Գեոնջեանց	Աղքընդըրպ.	Աղէքսնդ.	»
3.	Յովհաննէս Տ. Մինասեան	Գորի	Գորի	Տփխիս
4.	Գէորգ Մելիքեան	Վլդկւկզ.	Վլդկւկզ.	Վլդկւկզ.
5.	Պարոյր Տ. Աբրահամեանց	Քէխարէլ	Գորի	Տփխիս
6.	Գրիգոր Ստամբոլյեան	Կարս	Կարս	Կարս
7.	Իրաւախաւ Սպանդունի	Դերբենտ	Դաղստանի շրջան	
8.	Արմենակ Թալանեանց	Ջարնջի	Աղէքսնդ.	Երևան
9.	Թադէոս Դիլանեանց	Թալին	Էջմիածին	»
10.	Գրիգոր Այգինեանց	Աստրախ.	Աստրախ.	Աստրախ.
11.	Աղէքսանդր Աբովեանց	Ջալալօղ.	Լօռի	Տփխիս
12.	Արշալոյս Փանեանց	Կուբա	Կուբա	Բագու
13.	Կարապետ Հաճեանց	Թօփտլի գ.	Ն. Նխչ.	Ն. Նխչ.
14.	Մելքոն Տ. Բաղդասարեան	Զալթը գ.	»	»
15.	Պարոյր Ասլանեանց	Մրէնա գ.	Ախլքլք.	Տփխիս
16.	Սամսոն Արքերեանց	Գետաշէն	Գանձակ	Գանձակ
17.	Սեդրակ Տ. Յարութիւնեան	Կողբ	Ղազախ	»
18.	Գէորգ Թամանցեանց	Ի Լզրեան.	Ճեմարանէ	Մոսկւցի.
19.	Սուքիան Ալարատեան	Տփխիս	Տփխիս	Տփխիս
20.	Ամոս Տ. Մովսիսեան	Չիկահող	Զանգեզ.	Գանձակ

Իսկ ընդունուած աշակերտների ուղարկուելուց յետոյ շարունակուեցին նոր նոր խնդիրներ յանուն Վեհ. Հայրապետի նոյն Ճեմարանի որոշուած քսան որդեգիրների հաշւում ընդունուելու համար և ապագային իբրև կանդիդատներ (եթէ հարկ լինի և վարչութիւնը նոր աշակերտներ պահանջէ) որոշուեցին հետևեալները որքան հնարաւոր էր փոքրահասակներից վարչութեան դրածի համաձայն. կանդիդատները սոքա են։

1.	Գաբրիէլ Տ. Ռուբինեան	Արթիկ	Աղէքսնդ.	Երևան
2.	Պարոյր Մամիկոնեան	Երևան	Երևան	»
3.	Ենովք Տ. Յովհաննիսեան	Մեծ Պարնի	Աղէքսնդ.	»
4.	Ռուբէն Բաղդասարեան	Դերբենդ	Դաղստանի շրջան	
5.	Աբգար Տ. Ստեփանեանց	Հադրութ	Զանգեզ.	Գանձակ

6. Աբգար Տ. Սարգսեան	Փօթի	Փօթի	Քութայ.
7. Մակարէ Մանուէլեան	Իգդիր	Իգդիր	Երևան
8. Շաւարշ Տ. Մատթէոսեան	Երևան	Երևան	»
9. Սուրէն Բաբայեան	»	»	»
10. Լևոն Հալաճեան	Արմաւիր	Արմաւիր	Կուբ. շրջ.
11. Աբգար Տ. Աւետիքեան	Բլեթանց	Զանգեզ.	Գանձակ
12. Գուրգէն Ափոզեան	Աղեքսանդրապ.	Աղեքսանդր.	Երևան
13. Գեղամ Տ. Յարութիւնեան	Իւվա	Երևան	»
14. Հայկ Տ. Սիմէոնեան	Երևան	»	»
15. Արմենակ Աբուլեան	Տփխիս	Տփխիս	Տփխիս.
16. Սուրէն Տ. Խաչատրեան	Բաթանա գ.	Ղազախ	»
17. Արիստակէս Տ. Սմբատեան	Երանոս	Ն. Բյզտ.	Երևան
18. Ստեփան Թումանեան	Գանձակ	Գանձակ	Գանձակ
19. Երուանդ Տ. Գաբրիէլեան	Սաչխէրէթ	Քութայ.	Քութայ.
20. Մամբրէ Տ. Յակոբեան	Մլեյզտ.	Էջմիած.	Երևան

Այսքան կանդիդատներից գուցէ շատ քչերին յաջողուի իրենց նպատակին հասնել, վասն զի ուղարկուած քան որդեգիրները կարող են մնալ ամբողջ տարիներ և աւարտել ճեմարանի լիակատար դասընթացը, որով մինչև նոցա աւարտելը և վարչութեան կողմից նորեր պահանջելը վերջին կանդիդատներս տարիքը մեծանալով և անյարմար համարուելով չուղարկուելին։

Ուստի և Նորին Ս. Օծութեան Վեհ. Հայրապետի հրամանի համաձայն սորանով յայտարարւում է ա) Թէ ներկայ Ցանուցարից այլ ևս աշակերտ ընդունելու խնդիրը վերջացած է և նորեր կը մնան անհետևանք՝ կրկին թուերը (ընդունածների և կանդիդատների) լրացած լինելու պատճառաւ։ բ) Կանդիդատ ընդունած աշակերտների ծնողները պէտք է ի նկատի ունենան, որ երեխաները՝ երբև բացառութիւն (Կովկասցիների համար) կընդունուին Լազարեան ճեմարանում առանց քննութեան 8—9 տարեկան։ Իսկ տասն տարեկանից սկսած պարտաւոր են գնացող աշակերտները պատրաստականից սկսած Ա. Բ. Գ. և այլ դասարանների համար տալ գիմնազիական քննութիւն, այլապէս յետ կը դարձուին վարչութեան կողմից։ Եւ գ) աշակերտական կանդիդատները պէտք է

լինին առողջակազմ և ունենան իրենց հետ վարչութեան ներկայացնելու համար ծննդական, բժշկի և իրենց հայրերի կոչմանը (званія) վկայականը և 150 բուբլի պատրաստի փող։

ԿՐՕՆԱԿԱՆ

ԱՏՈՄԵԱՆՔ

Ատոմեանց մասին մեր ունեցած տեղեկութիւնները Ցայսմաւուրքիցն են (օգոստ. 19) և ճառընտիրներից։ Վերջիններիս մէջ պահուած է Ատոմեանց ընդարձակ վկայաբանութիւնը, հրատարակուած Սոփերք, ԺԹ, 69—82։ Այս աղբիւրներիցն է առնուած ներքևում լոյս տեսնող քերթուածի նիւթը։ Ատոմեանց վկայաբանութեան հեղինակն է Վարագի վանահայր Հայր Տաճատը, որի ժամանակը՝ ըստ մեր հետազօտութեան՝ չէ ուշ 10-դ դարից, բայց և ոչ կանուխ 7-դ դարի առաջին կիսից։ Ուրիշ անգամ յոյս ունենալով վերադառնալ Տաճատ Վարագեցուն, այստեղ առ այժմ մի երկու տողով աւելորդ չենք համարում յիշեցնել ընթերցողներին Ատոմեանց պատմութեան հմտառօտութիւնը, ինչպէս որ հին աւանդութիւնից առած այդ գրի է առել Տաճատ Վարագեցին։ Պարսից Ցազկերտ թագաւորի ժամանակ արքունի Դուռն է կոչւում հրովարտակով հայ ազատագունդը։ Երկու մեծ նախարար՝ Ատոմ Գնունին և Մանաճիհր Ռշտունին՝ իրենց մարդկանցով գտնւում էին հեռաւոր «մարզում»։ այսինքն սահմանագլխում, երևի այժմեան Անդրկասպեան երկրի հարաւում։ Ստանալով արքունի հրամանը և լաւ գիտենալով որ կանչւում են Դուռը քրիստոնէութիւնն ուրանալու՝ մեծ տրտմութեամբ ճանապարհ են ընկնում, երևի դէպի արևմուտք։ «Եւ հասեալ ի կիցս ճանապարհին, որ զատանէր յաշխարհն Հայոց»։ այսինքն հասնում են ճանապարհի այն կէտը, որտեղ բաժանւում էր ուղին։ Մի ճանապարհը տանում էր դէպի հարաւ—արքունի Դուռը, միւսը՝ դէպի արևելք—Հայաստան։ Խոր-